ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 04.01.2024թ. հ.073 գրության՝ Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոցի հ.33/5 հասցեում նախատեսվող կառուցապատման վերաբերյալ, տեղեկացվում է, որ նշված հասցեում կառուցապատողներ՝ Գեղեցիկ Պողոսյանին և Էդուարդ Մարտիրոսյանին, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նպատակով, 28.06.2023թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է հ.01/18-07/1-Դ-4455-534 նախագծման թույլտվությունը:

Տեղեկացվում է նաև, որ քաղաքաշինական գործունեության իրականացման նպատակով Երևանի քաղաքապետարան ներկայացված ցանկացած հայտ քննարկվում է բացառապես ՀՀ գործող նորմերի և սահմանված ընթացակարգերի համաձայն, հիմք ընդունելով՝ ՀՀ գործող նորմերի համապատասխանությանը հավաստող, պետական և լիցենզավորված կազմակերպությունների կողմից տրված դրական եզրակացությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ